Քլորի ^{35}Cl և ^{37}Cl իզոտոպների միջուկներում պրոտոնների գումարը հավասար է.

- 1) 34
- 2) 35
- 3) 36
- 4) 37

Ա 3

Անոքում կա 22գ ածխաբբու գազ (ն.ա.):

1. Այդ գազի ծակալը (լ) հավասար է.

- 1) 1,12
- 2) 2,24
- 3) 3,36
- 4) 11,2

2. Այդ գազի նյութաքանակը (մոլ) հավասար է.

- 1) 0,05
- 2) 0,5
- 3) 0,15
- 4) 1

Ա 4

Մաքուր նյութ է.

- 1) ածխաբբու գազը
- 2) արյունը
- 3) կաթը
- 4) օղը

Ա 5

Ֆիզիկական երևոյթ է.

- 1) կարի թթվելը
- 2) ջրածնի այրվելը
- 3) կավճի մանրացումը
- 4) էլեկտրական հոսանքի ազդեցությամբ ջրի քայլայումը

Ա 6

Միլիցիումի ատոմի հիմնական վիճակում

1. արտաքին էներգիական մակարդակի էլեկտրոնային քանածնն է.

- 1) $3s^23p^2$
- 2) $3s^23p^4$
- 3) $4s^24p^2$
- 4) $4s^24p^4$

2. ազատ օրբիտալների թիվը հավասար է.

- 1) 2
- 2) 1
- 3) 4
- 4) 3

Ա 7

Իննական կապը առկա է հետևյալ նյութի մեջ.

- 1) HCl
- 2) CF₄
- 3) SO₂
- 4) KBr

Ա 8

Նյութերի ո՞ր շարքում է ծծմբի օքսիդացման աստիճանը նույնը.

- 1) H₂SO₃, H₂SO₄, SO₃
- 2) SF₆, SO₃, K₂SO₄
- 3) SO₂, SCl₂, Li₂SO₃
- 4) CuS, K₂SO₃, BaSO₄

Ա 9

Ուսակցիան, որի հավասարումն է
 $\text{Ca}(\text{OH})_2 + \text{H}_2\text{SO}_4 = \text{CaSO}_4 + 2\text{H}_2\text{O} + Q$, դասվում է.

- 1) ջերմանցատիչ, տեղակալման ռեակցիաների շարքին
- 2) ջերմակլանիչ, տեղակալման ռեակցիաների շարքին
- 3) ջերմակլանիչ, փոխանակման ռեակցիաների շարքին
- 4) ջերմանցատիչ, փոխանակման ռեակցիաների շարքին

Ա 10

100գ ջրի մեջ լուծել են 25գ կերակրի աղ:

1. Լուծույթում նյութի զանգվածային բաժինը.

- 1) լուծված նյութի զանգվածի հարաբերությունն է ջրի զանգվածին
- 2) լուծույթում նյութի զանգվածն է
- 3) լուծված նյութի զանգվածի հարաբերությունն է լուծույթի զանգվածին
- 4) նյութի լուծելիության բնույթագիրն է

2. Կերակրի աղի զանգվածային բաժինը (%) լուծույթում հավասար է.

- 1) 10
- 2) 20
- 3) 25
- 4) 30

Ա 11

1. Լուծույթում քլորիդ-իոնների հայտնաբերման համար կարելի է օգտագործել.

- 1) բարիումի հիդրօքսիդի լուծույթ
- 2) նատրիումի կարբոնատի լուծույթ
- 3) ամոնիումի սուլֆատի լուծույթ
- 4) արծաթի նիտրատի լուծույթ

2. Ուսակցիայի արդյունքում ստացված նյութերից է.

- 1) BaCl₂
- 2) NaCl
- 3) NH₄Cl
- 4) AgCl

Ա 12

Ո՞ր աղի ջրային լուծույթում է լակմուսը կարմրում.

- 1) K₂SO₄

- 2) $\text{Zn}(\text{NO}_3)_2$
 3) NaNO_3
 4) Na_2CO_3

Ա 13

1. Ո՞ր շարքի բոլոր նյութերն են՝ ուժեղ էլեկտրոլիտներ.

- 1) H_2SO_4 , NaCl , KOH
 2) HNO_3 , HClO_4 , H_2CO_3
 3) HCl , H_2O , H_2SO_3
 4) H_2SiO_3 , NaOH , KF

2. Ո՞ր շարքի բոլոր նյութերն են՝ բույլ էլեկտրոլիտներ.

- 1) CuS , LiOH , BaCl_2
 2) NaCl , HCl , $\text{Al}(\text{NO}_3)_3$
 3) H_2O , NH_4OH , H_2SO_3
 4) AgCl , KOH , NH_4Cl

Ա 14 AgNO_3 ջրային լուծույթի էլեկտրոլիզի ժամանակ

1. կատոդի վրա աճաւտվում է.

- 1) արծաթ
 2) քլոր
 3) ջրածին
 4) բրվածին

2. անոդի վրա աճաւտվում է.

- 1) արծաթ
 2) քլոր
 3) ջրածին
 4) բրվածին

Ա 15 Ելեկտրոնային հաշվեկշռի եղանակով հավասարեցնել տրված օքսիդավերականգնման ռեակցիան. $\text{Ca} + \text{HNO}_3 \rightarrow \text{Ca}(\text{NO}_3)_2 + \text{N}_2\text{O} + \text{H}_2\text{O}$

1. Հավասարման քամակաչափական գործակիցների գումարն է.

- 1) 23
 2) 24
 3) 32
 4) 15

2. Ռեակցիայի հավասարման մեջ վերականգնիչի տրամադրած էլեկտրոլիտի թիվն է.

- 1) 2
 2) 5
 3) 3
 4) 4

Ա 16 $2\text{NO} + \text{O}_2 \rightarrow 2\text{NO}_2$ հավասարումով ընթացող ռեակցիայի

1. արագությունը մեծացնելու համար անհրաժեշտ է.

- 1) մեծացնել NO -ի կոնցենտրացիան
 2) փոքրացնել NO -ի կոնցենտրացիան
 3) մեծացնել NO_2 -ի կոնցենտրացիան
 4) ճնշումը իջեցնել

2. ո՞ր է ռեսակցիայի արագության չափման միավորը.

- 1) կգ/մոլ
- 2) գ/մոլ.վրկ
- 3) մոլ/կգ.վրկ
- 4) մոլ/լ.վրկ

Ա 17

1. Ո՞ր պղնումն է ճիշտ ամֆոսեր (երկդիմի) օքսիդների համար.

- 1) փոխազդում են միայն հիմքերի հետ
- 2) փոխազդում են միայն քրուների հետ
- 3) փոխազդում են և հիմքերի, և քրուների հետ
- 4) չեն փոխազդում ոչ հիմքերի, ոչ քրուների հետ

2. Ամֆոսեր (երկդիմի) օքսիդների զոյզն է.

- 1) CO_2 և CaO
- 2) Al_2O_3 և ZnO
- 3) CO_2 և SO_3
- 4) ZnO և SO_2

Ա 18

Լուսավորման պայմաններում ջրածինը ո՞ր նյութի հետ է փոխազդեցության մեջ մտնում.

- 1) Cu
- 2) Cl_2
- 3) C
- 4) Au

Ա 19

Քլորի ստացման արտադրական եղանակ է.

- 1) նատրիումի քլորիդի լուծույթի էլեկտրոլիզը
- 2) աղաթրվի օքսիդացումը կալիումի պերմանգանատով
- 3) քլորածրածնի ջերմային քայլայումը
- 4) աղաթրվի օքսիդացումը բերթուելի աղով

Ա 20

Ո՞ր նյութի ջերմային քայլայումից կարելի է ստանալ.

1. բրվածին.

- 1) $(\text{NH}_4)_2\text{Cr}_2\text{O}_7$
- 2) NH_4NO_3
- 3) NH_4NO_2
- 4) NaNO_3

2. ազոտի (I) օքսիդ.

- 1) $(\text{NH}_4)_2\text{Cr}_2\text{O}_7$
- 2) NH_4NO_3
- 3) NH_4NO_2
- 4) NaNO_3

Ա 21

Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ է խիստ ազոտական քրուն սենյակային ջերմաստիճանում փոխազդեցության մեջ մտնում.

- 1) Zn, CaO, Na_2SiO_3
- 2) Au, Al_2O_3 , Na_2SO_4
- 3) Al, Cr_2O_3 , $\text{Fe}(\text{NO}_3)_2$
- 4) Fe, MgO, CaCO_3

Ա 22

1. Ո՞ր դեսպում կարող է նստվածք առաջանալ, եթե 1մլ $Ca(OH)_2$ պարունակող լուծույթի մեջ բաց բռղնի:

- 1) 1 մլ CO_2
- 2) 2 մլ CO_2
- 3) 3 մլ CO_2
- 4) 4 մլ CO_2

2. Առաջացած նստվածքի զանգվածը (q) կազմում է:

- 1) 100
- 2) 200
- 3) 300
- 4) 400
- 5)

Ա 23

Երկարյա թիթեղը ընկոմել են պղնձի սուլֆատի լուծույթի մեջ, ինչի հետևանքով թիթեղը կարմրել է:

Ընթացած ռեակցիայի հավասարման բոլոր գործակիցների գումարը հավասար է.

- 1) 5
- 2) 6
- 3) 4
- 4) 3

Ա 24

Թթվածնի հետ անմիջականորեն փոխազդելիս օքսիդ է առաջացնում.

- 1) լիթիումը
- 2) նատրիումը
- 3) կալիումը
- 4) ռուբիդիումը

Ա 25

Ստորև բերված նյութերից որո՞նց հետ սենյակային ջերմաստիճանում կարող է փոխազդել մետաղական կալցիումը՝ ա) He, բ) H_2 , գ) H_2O , դ) O_2 , ե) N_2 :

- 1) ա, զ, դ, ե
- 2) բ, զ, դ
- 3) զ, դ
- 4) զ, դ, ե

Ա 26

Ալյումինի հիդրօքսիդ կարելի է ստանալ, եթե միմյանց փոխազդեն.

- 1) ալյումինի օքսիդը և ջուրը
- 2) ալյումինի օքսիդը և չոր նատրիումի հիդրօքսիդը
- 3) ալյումինի քլորիդի և նատրիումի հիդրօքսիդի (մեծ ավելցուկ) լուծույթները
- 4) ալյումինի քլորիդի և նատրիումի հիդրօքսիդի (պակասորդ) լուծույթները

Ա 27

1. Ո՞ր զույգ նյութերի փոխազդեցության հետևանքով կարելի է ստանալ երկարի (III) քլորիդ .

- 1) երկարի և քլորի
- 2) երկարի և աղաքաբվի
- 3) երկարի և պղնձի (II) քլորիդի
- 4) երկարի (II) օքսիդի և աղաքաբվի

2. $FeCl_3$ -ի լուծույթին ավելացրել են կալիումի ոռոգմիջի լուծույթ, որի հետևանքով.

- 1) առաջացել է կարմիր լուծույթ
- 2) առաջացել է կապույտ լուծույթ
- 3) գոյացել է կապույտ նստվածք
- 4) փոփոխություն չի կատարվել

Ա 28

Սիմյանց հաված երկարի և ցինկի քիքեղները ընկղմել են կերակրի աղի լուծույթի մեջ, որի հետևանքով տեղի է ունեցել.

- 1) երկարի կոռոզիայի դանդաղեցում և ցինկի կոռոզիայի արագացում
- 2) երկարի կոռոզիայի արագացում և ցինկի կոռոզիայի դանդաղեցում
- 3) երկու մետաղների կոռոզիայի դանդաղեցում
- 4) երկու մետաղների կոռոզիայի արագացում

Ա 29

Ո՞ր շարքի բոլոր միացություններն են իզոմերներ.

- 1) բութեն-1, ցիկլոպրեն, 2-մեթիլպրոպեն
- 2) 2-մեթիլպրոպեն, բութեն-1, հեքսեն-2
- 3) բութան, բութեն-2, 2-մեթիլբութեն-1
- 4) պենտան, 2-մեթիլբութան, 2,2-դիմեթիլպրոպան

Ա 30

Պրոպենի և բրոմաջրածնի փոխազդեցության հետևանքով առաջացած միացության մեջ $\angle CCC$ վալենտային անկյունը մոտավորապես հավասար է.

- 1) 180°
- 2) 120°
- 3) 109°
- 4) 90°

Ա 31

C_8H_{10} բաղադրությամբ իզոմերային արենների թիվը հավասար է.

- 1) 2
- 2) 6
- 3) 4
- 4) 8

Ա 32

Համապատասխան պայմաններում 0,6նլ ֆենոլ փոխազդել է ավելցուկով վերցված բրոմաջրի հետ: Փոխազդեցության հետևանքով ստացված նստվածքի զանգվածն է (գ).

- 1) 151,2
- 2) 198,6
- 3) 331,0
- 4) 103,8

Ա 33

Պղնձի (II) հիդրօքսիդի հետ փոխազդելիս դեղնակարմրավուն նստվածք կարող է առաջանել.

- 1) քացախաթրուն
- 2) պլուայինաթրուն
- 3) մրջնաթրուն
- 4) էթիլացետատը

Ա 34

Համապատասխան պայմաններում էթիլացետատ կարելի է ստանալ հետևյալ երկու նյութերի փոխազդեցությամբ.

- 1) մեթանոլի և մրջնաթրվի
- 2) էթանոլի և մրջնաթրվի
- 3) մեթանոլի և քացախաթրվի
- 4) էթանոլի և քացախաթրվի

Ա 35

1. Բնական բարձրաստղեկուլային միացություն է.

- 1) պոլիէթիենը
- 2) գյուկոզը
- 3) թաղանթանյութը
- 4) սախարոզը

2. Այդ միացությունը առաջացել է.

- 1) էթիլենի պոլիմերացումից
- 2) β-գլյուկոզի պոլիկոնդենսումից
- 3) α- գլյուկոզի պոլիկոնդենսումից
- 4) α- գլյուկոզի և β-գլյուկոզի պոլիկոնդենսումից

Ա 36

Բենզոլի նիտրացումը

1. Կատարում են.

- 1) նոսր ազոտական թթվով
- 2) ազոտի (IV) օքսիդով
- 3) խիտ ազոտական և ծծմբական թթուների խառնուրդով
- 4) նատրիումի նիտրատի հալույթով

2. այդ ռեակցիայի արդյունքում ստացված օրգանական նյութն է.

- 1) 1, 3, 5 - տրինիտրոբենզոլը
- 2) նիտրոբենզոլը
- 3) 1,4,5 - տրինիտրոբենզոլը
- 4) 1,4 - դինիտրոբենզոլը

Բ մակարդակ

Բ 1

Երկու նյութերի միջև ընթացող ռեակցիայի կրծատ իոնական հավասարման աջ մասը հետևյալն է.
 $\dots + \dots = \text{SO}_4^{2-} + \text{H}_2\text{O}$: Այդ երկու նյութերն են.

- ա) կծու կալիումը և ծծրի (VI) օքսիդը
- բ) կծու կալիումը և ծծրի (IV) օքսիդը
- գ) չհանգած կիրը և ծծրի (VI) օքսիդը
- դ) կծու կալիումը և ծծմբական թրուն

Գրել ընտրված երկու նյութերի միջև ընթացող ռեակցիայի մոլեկուլային և կրծատ իոնական հավասարումները և որպես պատասխան նշել ընտրված ռեակցիայի մոլեկուլային հավասարման գործակիցների գումարը:

Բ 2

Տրված է օքսիդների չորս զույգ: Ո՞ր զույգի օքսիդները կարող են բարձր ջերմաստիճանում փոխազդել միմյանց հետ:

- ա) նատրիումի օքսիդ և պղնձի (I) օքսիդ
- բ) նատրիումի օքսիդ և պղնձի (II) օքսիդ
- գ) նատրիումի օքսիդ և ցհնկի օքսիդ
- դ) նատրիումի օքսիդ և քրոմի (II) օքսիդ

Գրել դրանց միջև ընթացող ռեակցիայի հավասարումը և որպես պատասխան ներկայացնել ընտրված ռեակցիայի վերջանյութի մոլային գանգվածը (գ/մոլ) :

Բ 3

Ազոտի և ազոտի (I) օքսիդի խառնուրդի խտությունն ըստ ջրածնի 16 է: **Պատասխանում նշել.**

1. խառնուրդի խտությունը ըստ H_2 -ի
2. ազոտի (I) օքսիդի ծավալային բաժինը խառնուրդում (%)

Բ 4

Չհագեցած ածխաջրածնի մեկ մոլում ածխածնի և ջրածնի գանգվածները համապատասխանաբար կազմում են 60գ և 10գ: **Պատասխանում նշել.**

1. այդ միացուրյան մոլեկուլում sp^3 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը
2. նոյն բաղադրությամբ ցիկլոպականի իզոմերների թիվը (բացառել տարածական իզոմերները)

Բ 5

Քանի՞ նյութերի են համապատասխանում հետևյալ անվանումները. կարագարթու, փայտի սպիրու, ֆորմալինիդ, երանոլ բուրանաբբու, մեթիլ սպիրու, մեթանոլ, մրջնալինիդ, գինու սպիրու: **Պատասխանում նշել.**

1. այդ նյութերի թիվը
2. քանի՞ սպիրու է նշված

Բ 6

Պոնձի սուլֆատի 400 գ 40% գանգվածային բաժնով ջրային լուծույթից ջերմաստիճանը իջեցնելիս անջատվել է 100 գ պղնձարջասապ: **Պատասխանում նշել նոր ստացված լուծույթում անջուր աղի գանգվածային բաժինը (%):**

Բ 7

Նատրիումի նիտրատի 400 գ 7,3% գանգվածային բաժնով ջրային լուծույթի էլեկտրոլիզի հետևանքով իներտ էլեկտրոդների վրա անջատվել են 201,6 լ (ն.պ.) գազեր:

1. Հաշվել էլեկտրոլիզի ենթարկված ջրի գանգվածը:
2. Հաշվել էլեկտրոլիզի ավարտից հետո նյութի գանգվածային բաժինը (%) լուծույթում:

Բ 8

$2\text{CO} + \text{O}_2 = 2\text{CO}_2$ հավասարումով ընթացող ռեակցիայում շմոլ գազի կոնցենտրացիան փոքրացրել են 5 անգամ: Քանի՞ անգամ ախտք է մնացնել թթվածնի կլոնցենտրացիան, որպեսզի ռեակցիայի արագությունը չփոխվի:

Բ 9

Լուծույթում լուծված են ցինկի, պղնձի և ամոնիումի քլորիդների հավասարամոլ քանակներ: Դրա վրա ավելացրել են ավելցուկով վերցված նատրիումի հիդրօքսիդի լուծույթ: Անջատվել է 11,2 լ (ն.պ.) գազ և նատվածք: Վերջինս առանձնացրել և շիկացրել են: **Պատասխանում նշել շիկացումից հետո ստացված պինդ մնացորդի գանգվածը (գ):**

Բ 10

Անիրաժեշտ է նվազագույն փուլերով ստանալ քլորոպրեն՝ ելնելով նատրիումի ացետատից:

- Գրել այդ ռեակցիաների հավասարումները և պատասխանում նշել բոլոր հավասարումների քանակաչափական գործակիցների գումարը:
- Գտնել նատրիումի ացետատից քլորոպրենի ստացման ելքը (%), եթե 410գ նատրիումի ացետատից ստացվում է 44,25գ քլորոպրեն:

Բ 11

20գ NaOH պարունակող լուծույթում հայտնաբերվել է $10,35\text{g Na}^+$ իոն:

- Հաշվել լուծույթում իոնների տրոհված NaOH -ի զանգվածը:
- Հաշվել այդ լուծույթում NaOH -ի դիտուման աստիճանը (%):

Բ 12

Քացախարքվի և մրջնարքվի խառնուրդը արծարի օք-սիլի ամոնիակային լուծույթի ավելցուկով մշակելիս անջատվել է $21,6\text{g}$ մետատ: Ելային խառնուրդի նույն քանակությունը մետադական ցինկի հետ փոխազդելիս անջատվել է $2,128\text{l}$ գազ: Հաշվել քացախարքվի զանգվածային բաժինը (%) խառնուրդում:

Բ 13

Տրված է 800g 20% զանգվածային բաժնով օլեում, որը բաժանել են երկու հավասար մասի: Մի մասի վրա ավելացրել են ծծմբական քրվի $85,6\%$ զանգվածային բաժնով լուծույթ և ստացել անջուր ծծմբական քրու, իսկ մյուս մասին՝ ծծմբական քրվի 20% զանգվածային բաժնով լուծույթ և ստացել $70\%-անոց$ ծծմբական քրու: Հաշվել:

- օլեումում ազատ ծծմբի (VI) օրսիդի քանակը (մոլ)
- $85,6\%-անոց$ ծծմբական քրվի զանգվածը (q)
- $20\%-անոց$ ծծմբական քրվի զանգվածը (q)

Բ 14

Երկարի (III) բրոմիդի ներկայությամբ արոմատիկ ածխաջրածնի բրոմացման ժամանակ գոյացել է ըստ զանգվածի $43,24\%$ բրոմ պարունակող մննորդումածանցյալ: Օրգանական ֆազը առանձնացնելուց հետո մնացած լուծույթը չեղոքացրել են 10% զանգվածային բաժնով կալիումի հիդրօքսիդի լուծույթով ($\rho=1,12\text{g}/\text{մլ}$): Նույն քանակով ածխաջրածնի այրման ժամանակ անջատվել է $358,4\text{l}$ (ն.պ.) ածխարքու գազ:

Հաշվել.

- արենի մեկ մոլեկուլում սիզմա կապերի քիվը
- փոխազդած կարումի հիդրօքսիդի լուծույթի ծավալը (մլ)
- արենի բոլոր իզոմերներում մերիլ խմբերի գումարային քիվը

Բ 15

Արծարի և պղնձի խառնուրդը մշակել են ավելցուկով վերցված $15\%-անոց$ նոսր ազոտական քրվով: Առաջացած աղերը անջատել և շիկացրել են: Շիկացնելուց հետո մնացած 504g պինդ մնացորդը լուծել են ամիրածեշտ քանակով աղաթքվի մեջ, ֆիլտրել են և լուծույթը ենթարկել էլեկտրոլիզի՝ մինչև գունազրկվելը: Անոյն վրա անջատվել է $50,4\text{l}$ (ն.պ.) գազ: Որոշել:

- ելային խառնուրդի զանգվածը (q)
- փոխազդած ազոտական քրվի լուծույթի զանգվածը (q)
- շիկացումից հետո անջատված զազային խառնուրդի զանգվածը (q)

Բ 16

Գազային վիճակում գտնվող (100°C) օրգանական միացության $60\text{N}\cdot\text{m}$ ավելացրել են 300N քրվածին և պայքերել: Նույն պայմանների բերելիս խառնուրդի ծավալը կազմել է 450ml : Զրային գուրուշիները հեռացնելուց հետո խառնուրդի ծավալը նվազել է մինչև 210ml , իսկ վերջինս էլ ակալիի լուծույթով անցկացնելիս մնացել է պղնձի հետ տարացման պայմաններում փոխազրող 30մլ գազ: Ելային միացության իզոմերներից երկուսը տարացման պայմաններում կարող են օրսիդանալ պղնձի (II) օրսիդով: Որոշել:

- ելային միացության մեկ մոլեկուլում աստուների գումարային քիվը
- ելային միացության հնարավոր բոլոր իզոմերների քիվը
- պղնձի (II) օրսիդով օրսիդացման արգասիքի մոլեկուլային զանգվածը

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեստերի առաջադրանքների բաշխումը ըստ կենսաբանության հիմնական բաժինների, թեմաների, ենթաբնաների

Հ/Հ	Կենսաբանության հիմնական բաժինները, թեմաները, ենթաբնաները	Ծննդ երի մասնա- բաժինը ըստ միա- վորների (%)
1.	ԲՈՒՅՈՒՐ, ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ, ՄՆԿԵՐ	9
1.1	Բույսերի բազմազանությունը (ծառատեսակներ, բիոլոգիական բազմազանության մասին, բույսերի բազմազանության մասին):	
1.2	Արմատ: Առանցքային և փնջածն արմատային համակարգեր: Արմատի աճը: Արմատի գոտիները (հատվածները): Զրի կանումը արմատի կողմից: Արմատի ձևափոխությունները:	
1.3	Ընծառակներ և բույրոցներ: Բույրոցների կառուցվածքը և տեսակները: Ընծառակների աճը երկարությամբ: Տերևաթիթեղի բջջային կառուցվածքը: Զրի գործիքացումը բույսերի կողմից: Ցողունի կառուցվածքը և ֆունկցիաները: Ցողունի աճը հաստությամբ, տարեկան օրականեր: Կոճղարմատ, պալար, սոխու:	
1.4	Ծաղկեցիներ: Ծաղկավոր բույսերի բեղմնավորումը: Պտուղների և սերմների առաջացումը: Երկշարի բույսերի սերմների կառուցվածքը: Միաշարի բույսերի սերմների կառուցվածքը: Բուսական հյուսվածները: Միաշարի և երկշարի բույսերի բնուրագիրը:	
1.5	Բակտերիաներ: Բակտերիաների կառուցվածքն ու կենսագործունեությունը: Բակտերիաների դերը բնության մեջ և մարդու կյանքում: Հիվանդաբեր բակտերիաներ:	
1.6	Մակեր: Մնկերի ընդհանուր բնութագիրը և կառուցվածքը: Գլխարկավոր սնկեր: Բորբոսասնկեր: Խմորասնկեր: Մակարույժ սնկեր:	
2.	ԿԵՆԴԱՆԻՆԵՐ	10
2.1	Նախակենդանամեր: Հողաբարիկ ինֆուզորիա (կենսամիջավայրը, կառուցվածքի և կենսագործունեության առանձնահատկությունները):	
2.2	Աղեղորչակորների տիպ: Քաղցրահամ ջրերի պոլիպ հիդրայի արտաքին և ներքին կառուցվածքի և կենսագործունեության առանձնահատկությունները: Հիդրայի բազմացումը:	
2.3	Տափակ որդերի տիպ: Սպիտակ պլանարիա և եզան երիկորդ (կենսամիջավայրը, արտաքին և ներքին կառուցվածքի, սննդառության, բազմացման և զարգացման առանձնահատկությունները):	
2.4	Կղոր որդերի տիպ: Մարդու ասկարիդ (կենսամիջավայրը, արտաքին կառուցվածքը, մաշկամկանային պարկը, մարմնի խոռոչը, մարսողության օրգանները, բազմացումը և զարգացումը):	
2.5	Օղակավոր որդերի տիպ: Անձրևորդ (կենսամիջավայրը, արտաքին կառուցվածքը, մաշկամկանային պարկը, մարմնի խոռոչը, մարսողության օրգանները, արտաքրության, արյունատար, նյարդային համակարգերը, բազմացումը):	
2.6	Հողվածոտամիկների տիպ: Միջատներ: Կենսակերպը և արտաքին կառուցվածքը: Միջատների ներքին կառուցվածքը (մարսողական, արյունատար, շնչառական, արտաքրության, նյարդային և սեռական համակարգերը): Միջատների բազմացումը և զարգացումը:	
2.7	Քորդավորների տիպ: Քորդավորների հիմնական առանձնահատկությունները:	
2.8	Գլխարրործակորներ: Նշտարիկի կենսակերպը և արտաքին կառուցվածքը, քորդան, մարսողությունը, շնչառությունը, արյունատար, արտաքրության և նյարդային համակարգերը:	
2.9	Զկներ: Զկների կենսակերպը և արտաքին կառուցվածքը: Զկների ներքին օրգանները: Զկների բազմացումը և զարգացումը:	
2.10	Երկկենցաղներ: Երկկենցաղների կենսակերպը և արտաքին կառուցվածքը: Երկկենցաղների կմախը և մկանունը: Երկկենցաղների ներքին օրգանները: Երկկենցաղների բազմացումը և զարգացումը:	
2.11	Սոլուններ: Սոլունների կենսակերպը և արտաքին կառուցվածքը: Սոլունների ներքին կառուցվածքը (կմախը, մարտղական, շնչառական, արյունատար, արտաքրության համակարգերը, նյարդային համակարգը և զգայարանները): Սոլունների բազմացումը:	
2.12	Թռչուններ: Թռչունների կենսակերպը և արտաքին կառուցվածքը: Թռչունների կմախը և մկանունը: Թռչունների ներքին օրգանները (մարտղական, շնչառական համակարգերը, արյան շրջանառությունը, արտաքրությունը): Թռչունների նյարդային համակարգը և զգայարանները: Թռչունների բազմացումը և զարգացումը:	
2.13	Կարճասուններ: Կարճասունների կենսակերպը և արտաքին կառուցվածքը, կարճասունների կմախը և մկանունը: Կարճասունների ներքին օրգանները: Կարճասունների բազմացումը և զարգացումը:	

3.	ՄԱՐԴ	20
3.1	Հյուսվածքներ: օրգաններ և օրգանների համակարգեր:	
3.2	Ֆիզիոլոգիական ֆունկցիաների մարդահումորալ կարգավորում: Հումորալ կարգավորում, նյարդային կարգավորում, նյարդահումորալ կարգավորում:	
3.3	Նյարդային համակարգ և նրա բաժինները: Նեյրոնների կառուցվածքը, հատկությունները և տեսակները: Ուղեկից բջիջներ: Նյարդային համակարգի բաժինները: Ռեֆլեքս, ռեֆլեքսային աղեղ: Ողնուղեղի կառուցվածքն ու ֆունկցիաները: Գլխուղեղի բաժինները, ուղեղաբուն, ուղեղիկ: Գլխուղեղի մեծ կիսագնդերի կառուցվածքը, մեծ կիսագնդերի կեղևի գոտիները: Վեգետատիվ նյարդային համակարգ: Սիմպասիկ նյարդային համակարգ: Պարասիմպատիկ նյարդային համակարգ:	
3.4	Ներգատական գեղձեր:	
3.5	Օրգանիզմի մերժին միջավայրի ու նրա նշանակությունը: Արյուն: Հյուսվածքային հեղուկ: Ավիշ: Արյան կազմը, արյան պլազման և նրա բաղադրությունը: Արյան մակարուում: Էրիթրոցիտներ, ելեկոնցիտներ, բրոմբոցիտներ: Արյան խճեր:	
3.6	Խոտմիստ: Օրգանիզմի պաշտպանական հատկությունները: Խմունիտեսի տեսակները:	
3.7	Արյան շրջանառություն: Արյունատար անորթների կառուցվածքը և ֆունկցիաները: Արյան շրջանառության մեծ և փոքր շրջանները: Սրտի կառուցվածքը: Սրտի աշխատանքը և կարգավորումը: Արյան ճնշում: Անորթազարկ: Արյան հոսքի արագությունը: Արյան շարժման առանձնահատկությունները երակներում:	
3.8	Ծնչառություն: Ծնչառության օրգաններ, կառուցվածքը և նշանակությունը: Ծնչառական շարժումներ և դրանց կարգավորումը: Գագափոխանակությունը թոքերում և հյուսվածքներում:	
3.9	Մարսողություն: Մարսողության նշանակությունը: Մարսողության համակարգի ֆունկցիաները: Մարսողության օրգանների կառուցվածքը: Մարսողությունը բերանի խոռոչում: Մարսողությունը ստամորսում: Ենթաստամորսային գեղձի, յարդի և աղիքային գեղձերի դերը մարսողության գործընթացում: Մարսողությունը աղիներում: Ներծծում:	
3.10	Վիտամիններ: Վիտամինների նշանակությունը: Վիտամինների տեսակները:	
3.11	Արտազատություն: Արտազատության օրգանների կառուցվածքը: Միզագոյացում:	
3.12	Մաշկ: Մաշկի ֆունկցիաները և կառուցվածքը: Օրգանիզմի ջերմաստիճանի կայտնությունը: Մաշկի ջերմակարգավորիչ դերը:	
3.13	Հենաշարժիք համակարգ: Հենաշարժիք համակարգի նշանակությունը: Ուսկրերի կառուցվածքը և աճը: Ուսկրերի միացման տեսակները: Մարդու կմախքը: Սկաններ, կառուցվածքը և ֆունկցիաները:	
3.14	Զգայական համակարգեր: Շրջապատող միջավայրի ընկալումը: Վերլուծիչի կառուցվածքը: Ընկալչների դասակարգումը և հարմարումը: Տեսողական վերլուծիչ: Լսողական վերլուծիչ: Անդաստակային վերլուծիչ: Մաշկային և մկանային զգայություն: Հոտառություն և ճաշակելիք:	
3.15	Վարքի ռեֆլեքսային տեսություն: Ոչ պայմանական ռեֆլեքսներ: Պայմանական ռեֆլեքսներ:	
4.	ԸՆԿԱՆՈՒԹ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9-րդ դասարան	49
4.1	Բջջարանության հիմնությները	
4.1.1	Բջջի բիմիական բաղադրությունը: Անօրգանական նյութեր (ջուր, աղեր): Սպիտակուցների բիմիական բաղադրությունը, կառուցվածքը, հատկությունները և ֆունկցիաները: Ածխաջրեր, ճարպեր: Նուկելինարքուներ՝ ԴՆԹ, ՈՆԹ (նուկելինարքուների կենսաբանական դերը, ԴՆԹ-ի կառուցվածքը, կրկնապատկումը, ՈՆԹ-ի կառուցվածքը, ֆունկցիաները):	
4.1.2	Բջջարանանի կառուցվածքը ու ֆունկցիաները (բջջարանան, պլազմային բաղանք, ֆազոցիտոզ, պինոցիտոզ): Ցիտոպլազման և նրա օրգանոիդները: Բջջակորիզ: Պլուկարիոտ բջջներ: Կյամիրի ու բջջային ձևեր՝ վիրուսներ:	
4.1.3	Նյութերի փոխանակությունը, ԱԵՖ (նյութերի փոխանակության ֆունկցիաները, ԱԵՖ-ի դերը բջջի էներգետիկ և պլաստիկ փոխանակություններում): Էներգետիկ փոխանակությունը բջջում: ԱԵՖ-ի սինթեզը (գլիկոլիզ, թրվածնային ճեղքում): Պլաստիկ փոխանակությունը: Սպիտակուցի կենսասինթեզը (սպիտակուցի կենսասինթեզի նշանակությունը, ԴՆԹ-ի զարտնագիրը, տրանսկրիպցիա, փոխադրություն, մատրիցային սինթեզի ռեակցիաներ, տրանսլյացիա, ֆերմենտների դերը, էներգետիկան):	
4.1.4	Ցուտուինթեզ (յուսային և մընային փուլերը, նշանակությունը կենդանի բնության համար): Քեմոսինթեզ:	
4.2.	Օրգանիզմների բազմացում և անհատական զարգացում	
4.2.1	Բջջի բաժանումը: Միտոզ:	
4.2.2	Օրգանիզմների բազմացման ձևերը (անսեռ, սեռական բազմացում, սեռական բջջների զարգացումը):	
4.2.3	Սեյոզ: Բեղմնավորում (կրկնակի բեղմնավորում, պարբենոզեմեզ):	

4.2.4	Օրգանիզմների անհատական զարգացումը՝ օնտոգենեզ (սաղմի զարգացումը, հետսադիմնային զարգացումը):	
4.3	Գենետիկայի հիմունքները	
4.3.1	Գենետիկան որպես գիտություն օրգանիզմների ժառանգականության և փոփոխականության մասին: Ժառանգականության ուսումնասիրության հիբրիդոլոգիական մեթոդ:	
4.3.2	Հիբրիդների առաջին սերնդի միակերպությունը: Մենդելի առաջին օրենքը: Ժառանգման միջանկյալ բնույթը (ճեղքավիրման օրենքի վիճակագրական բնույթը): Ժառանգման օրինաչափությունների բջջաբանական հիմունքները (զամետների մաքրության վարկածը և նրա բջջաբանական հիմունքները, ալելյային գեներ):	
4.3.3	Երկիրիդային խաչասերում: Մենդելի երկրորդ օրենքը: Երկիրիդիային խաչասերման բջջաբանական հիմունքները: Շղթայակցված ժառանգման երևոյթը և սերի գենետիկան:	
4.3.4	Գեների փոխներգործությունը: Գեների բազմակի ներգործությունը:	
4.3.5	Մարդու գենետիկան (ուսումնասիրման մեթոդները) և դրա նշանակությունը բժկագիտության և առողջապահության համար:	
4.3.6	Մողիֆիկացիոն փոփոխականություն (ուսակցիայի նորմա, մողիֆիկացիոն փոփոխականության վիճակագրական օրինաչափությունները):	
4.3.7	Մուտացիոն փոփոխականություն (գենային, բրոմոստմային, սոմատիկ մուտացիաներ, մուտացիաների հաճախությունը և դրանց պատճառները): Ցիտոպլազմային ժառանգականություն:	
4.3.8	Պոպուլյացիաների գենետիկա:	
5.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 10-րդ դասարան	12
5.1	Էվոլյուցիոն ուսմունք	
5.1.1	Դարվինի ուսմունքի հիմնական դրույթները:	
5.1.2	Տեսակ: Տեսակի չափանիշները: Պոպուլյացիան որպես էվոլյուցիայի միավոր:	
5.1.3	Ժառանգականություն և փոփոխականություն (ոչ ժառանգական կամ մողիֆիկացիոն փոփոխականություն, ժառանգական փոփոխականություն):	
5.1.4	Գոյության կրիվ (բազմացման իմտենսիվությունը, գոյության կրիվ ձևերը):	
5.1.5	Բնական ընտրություն, (բնական ընտրության էությունը, ընտրությունը պոպուլյացիաների մեջ, բնական ընտրության ստեղծագործական դերը, բնական ընտրության ձևերը):	
5.1.6	Օրգանիզմների հարմարվածությունը և դրա հարաբերականությունը (հարմարվածության բազմագանությունը, հարմարվածության առաջացումը, հարմարվածության հարաբերականությունը):	
5.2	Օրգանական աշխարհի զարգացումը	
5.2.1	Մակրոէվոլյուցիա և նրա ապացույցները (կենսարիմիական ապացույցներ, ձևաբանական ապացույցներ, սաղմնաբանական ապացույցներ, կենսագենետիկ օրենք, հմէտաբանական ապացույցներ, բրածո անցողոկ ձևեր):	
5.2.2	Օրգանական աշխարհի էվոլյուցիայի գլխավոր ուղիները (արոմորֆոզ, իդիուրաբաղադրացիա, ընդհանուր դեգեներացիա, էվոլյուցիայի տարրեր ուղիների հարաբերակցությունը):	
5.3	Էկոլոգիայի հիմունքները	
5.3.1	Էկոլոգիական գործոններ: Գործոնների ազդեցությունը օրգանիզմի վրա: Սահմանափակող գործոն: Միջավայրի հիմնական արիոտիկ գործոնները և դրանց նշանակությունը կենդանի բնության համար (լույս, ջերմաստիճան, խոնավություն):	
5.3.2	Էկոլոգիական համակարգեր (կենսաբերկացենոզ, սննդային կապեր, էներգիայի կորուստները սննդային շղթաներում):	
5.4	Կենսոլորտի վերաբերյալ ուսմունքի հիմունքները	
5.4.1	Կենսոլորտը և նրա սահմանները	
5.4.2	Կենդանի նյութի հատկությունները	
5.4.3	Նյութերի շրջապտույտը: Միկրոօրգանիզմների դերը նյութերի շրջանառության մեջ:	
	Ընդամենը	100

**Թ-ԵՍ
Ա մակարդակ**

Ա 1

Ցողունի ո՞ր մասում են գտնվում մաղանման խողովակները.

- 1) միջուկում
- 2) լուրում
- 3) բնափայտում
- 4) խցանում

Ա 2

Թվարկված գոյացություններից որո՞նք են գտնվում վարսանի սերմնարանի խոռոչում.

- 1) փոշեհատիկները
- 2) սերմնասկզբնակները
- 3) պտուղները
- 4) սերմնասկզբնակներն ու պտուղները

Ա 3

Ինչպե՞ս են տարածվում գլխարկավոր սնկերի սպորտները.

- 1) միջատների և կողինջների միջոցով
- 2) սկյուտների և նապաստակների միջոցով
- 3) քամու միջոցով
- 4) ճիշտ են բոլոր պատասխանները

Ա 4

Ինչպե՞ս են կոչվում գլխավոր արմատից աճող արմատները.

- 1) հավելյալ
- 2) հենարանային
- 3) ռիզոդիմեր
- 4) կործային

Ա 5

Ո՞ր պրոցեսը չի իրականացվում տերևի թիթեղի հյուսվածքներում.

- 1) ֆոտոսինթեզ
- 2) ջրի փոխադրում
- 3) պտղի ձևավորում
- 4) շնչառություն

Ա 6

Սարդու ո՞ր օրգանում է ձվից դուրս գալիս ասկարիդի թրթուրը.

- 1) թոքերում
- 2) աղիքներում
- 3) լյարդում
- 4) բերանի խոռոչում

Ա 7

Թվարկած կենդանիներից որի՞ ձվարջիջների բեղմնավորումն է տեղի ունենում էզի ձվատարներում.

- նշտարիկի
 2) ճարախիկ մողեսի
 3) գորտի
 4) գետի պերկեսի

Ա 8

Ո՞ր պարուն է բնորոշ տափակ որդերի մեծ մասին.

- 1) հերմանիոդիտներ են
- 2) քաղցրահամ ջրերում ազատ ապրող ձևեր են
- 3) ազատ ապրող ծովային ձևեր են
- 4) բաժանասեռ օրգանիզմներ են

Ա 9

Որտե՞ղ է ավարտվում գորտի արյան շրջանառության փոքր շրջանը.

- 1) աջ նախասրտում
- 2) ձախ նախասրտում
- 3) փորոքում
- 4) ձախ կամ աջ նախասրտում՝ կախված միջավայրի ջերմաստիճանից

Ա 10

Ուշունների օղակարկերին վերաբերող ո՞ր պարուն է ճիշտ.

- կատարվում է գազափոխանակություն
 2) կուտակվում է թթվածին
 3) կուտակվում է ածխաբքու գազ
 4) գազափոխանակություն տեղի չի ունենում

Ա 11

Ո՞ր դեպքում է ջերմագոյացումն ուժեղանում մարդու օրգանիզմում.

- 1) միջավայրի ջերմաստիճանը բարձրանալիս
- 2) մաշկ հոսող արյան քանակն ավելանալիս

- 3) մաշկի անորները լայնանալիս
- 4) նյութափոխանակությունն ուժեղանալիս

Ա 12 Ի՞նչո՞վ է հարուստ մարդու կույր աղիքի որդանման հավելվածը.

- 1) հյութազատիչ գեղձերով
- 2) լորձ արտազատող գեղձերով
- 3) ավշային հանգույցներով
- 4) ճիշտ են բոլոր պատասխանները

Ա 13 Ինչո՞վ է պայմանավորված մարդու սրտի ինքնավարությունը.

- 1) մկանաթելերի կծկողականությամբ
- 2) մկանաթելերի հաղորդելիությամբ
- 3) որոշ մկանաթելերի ինքնածին դրդունակությամբ և հաղորդելիությամբ
- 4) սրտի փականների համաձայնեցված աշխատանքով

Ա 14 Ի՞նչ չի դիտվում մարդու օրգանիզմում C վիտամինի անբավարարության դեպքում.

- 1) մաշկի արյունազեղում
- 2) անդամալուծություն
- 3) լնդերի արյունահոսություն
- 4) խոց լորձաթանթում

Ա 15 Ի՞նչն է նպաստում սննդախյուսի տեղաշարժին մարդու բարակ առիքում.

- 1) աղիքի պատերի օղակաձև մկանների կծկումները
- 2) աղիքի պատերի երկայնակի մկանների կծկումները
- 3) թափիկների կծկումները
- 4) ճիշտ են բոլոր պատասխանները

Ա 16 Մարդու մարմնի ո՞ր մասում են քիչ շոշափական ընկալիչները.

- 1) բազկի վրա
- 2) ազդրի վրա
- 3) մեջքի հատվածում
- 4) ճիշտ են բոլոր պատասխանները

Ա 17 Մարդու օրգանիզմում որտեղո՞վ են անցնում բոլոր պայմանական ռեֆլեքսների աղեղները.

- 1) ողնուղեղով
- 2) երկարավիւն ուղեղով
- 3) միջին ուղեղով
- 4) մեծ կիսագնդերի կեղևով

Ա 18 Ի՞նչ ֆունկցիա է կատարում մարդու աչքի սպիտակուցային թաղանթը.

- 1) ակնագնդին տախս է որոշակի ձև
- 2) պաշտպանում է մեխանիկական ներգործություններից
- 3) պաշտպանում է օտար մասնիկների և մանրէների ներթափանցումից
- 4) ճիշտ են բոլոր պատասխանները

Ա 19 Մարդու օրգանիզմում ո՞ր գործոններն են մասնակցում արյան մակարդմանը.

- 1) քրոմբոցիտները
- 2) կալցիումի իոնները
- 3) ֆիբրինոգեն սալիտակուցը
- 4) ճիշտ են բոլոր պատասխանները.

Ա 20 Մարդու օրգանիզմում ի՞նչ չի կարգավորում ենթատեսարումը.

- 1) քնի և արթնության հերթազայումը
- 2) քաղցր և հազեցումը
- 3) բրային ռեֆլեքսները
- 4) սեռական վարքագիծը

Ա 21

Մարդու օրգանիզմում ի՞նչն է արգելակում թքարտադրությունը.

- 1) աղբենալինը
- 2) ցավային գրգիռները
- 3) մտավոր լարումը
- 4) ճիշտ են բոլոր պատասխանները

Ա 22

Ի՞նչից է կազմված մարդու երիկամային մարմնիկի պատիճը.

- 1) տափակ էպիթելային հյուսվածքից
- 2) շարակցական հյուսվածքից
- 3) թարթիչավոր էպիթելային հյուսվածքից
- 4) ճիշտ են 1 և 2 այստասխանները

Ա 23

Որտե՞ղ է իրականանում ածխաջրերի (պոլիսախարիդների) սինթեզը.

- 1) Գոլցի ապարատում
- 2) լիզոսումներում
- 3) ոիրոսումներում
- 4) Գոլցի ապարատում և լիզոսումներում

Ա 24

Կառուցվածքային ո՞ր մակարդակում են սպիտակուցներն օժտված կենսաքանական ակտիվությամբ.

- 1) Երրորդային կամ չորրորդային կառուցվածքային մակարդակներում
- 2) Երկրորդային կառուցվածքի մակարդակում
- 3) Միայն չորրորդային կառուցվածքի մակարդակում
- 4) արդեն առաջնային կառուցվածքի մակարդակում

Ա 25

Ինչո՞ւ ԱԵՖ-ի մոլեկոլի կառուցվածքը կայուն չէ.

- 1) իրար մոտ գտնվող ածխածնի բացասական լիցքով և ջրածնի դրական լիցքով լիցքավորված ատոմները միմյանց ձգում են
- 2) իրար մոտ գտնվող ածխածնի բացասական լիցքով լիցքավորված ատոմները միմյանց վանում են
- 3) իրար մոտ գտնվող ջրածնի դրական լիցքով լիցքավորված ատոմները միմյանց վանում են
- 4) իրար մոտ գտնվող թթվածնի բացասական լիցքով լիցքավորված ատոմները միմյանց վանում են

Ա 26

Ի՞նչ նույնականացներ են մտնում վիրուսների բաղադրության մեջ.

- 1) միայն ԴՆԹ-
- 2) միայն ՌՆԹ-
- 3) կամ ԴՆԹ, կամ ՌՆԹ
- 4) ԴՆԹ և ՌՆԹ-

Ա 27

Մաղմնային ո՞ր քերթից են զարգանում միզասեռական համակարգի օրգանները.

- 1) էկտոդերմից
- 2) մեզոդերմից
- 3) էնտոդերմից
- 4) բոլոր թվարկվածներից

Ա 28

Ինչի՞ն է հանգեցնում քջաքաղանքներում հիդրոֆոր նյութերի առկայությունը.

- 1) հեշտացնում է միջավայրից դեպի քջի ջրի փոխադրումը
- 2) սահմանափակում է ջրի փոխադրումը
- 3) հեշտացնում է քջից դեպի միջավայր ջրի փոխադրումը
- 4) նպաստում է բուսական քջի կայուն ձևի պահպանմանը

Ա 29

Ի՞նչպէս եմ խոշոր մոլեկուլները, կարծր մասմիկները պլազմատիկ բաղամթի միջով թափանցում կենացական քջից.

- 1) պինոցիտոզի միջոցով
- 2) ֆագոցիտոզի միջոցով
- 3) նատրիում-կալիումական պոմպով
- 4) դիֆուզիայի միջոցով

Ա 30

Որտե՞ղ են առաջանում կորիզակները.

- 1) քրոմոսումների որոշակի հատվածներում
- 2) ողորկ էնդովլազմային ցանցի թաղանթների վրա

- 3) կորիգաբաղանքի ներքին թաղանքի վրա
4) բջջային կենտրոնում

Ա 31

- Ի՞նչ է առաջանում աճման գոտու մեկ առաջնային իզական սեռական բջջի հասունացման գոտում.
մեկ ձվարշիջ, երեք ուղղորդող մարմնիկներ և չորս սպերմատոզոֆիջ
2) մեկ ձվարշիջ և չորս սպերմատոզոֆիջ
3) մեկ ձվարշիջ և երեք ուղղորդող մարմնիկներ
4) չորս սպերմատոզոֆիջ

Ա 32

Սարլու մոտ ո՞ր մուտացիաներն են փոխանցվում ժառանգարար.

- սոմատիկ բջջների դոմինանտ մուտացիաները
2) գամետներ առաջացնող բջջների մուտացիաները
3) սոմատիկ բջջների ռեցեսիվ մուտացիաները
4) սոմատիկ բջջների ռեցեսիվ և դոմինանտ մուտացիաները

Ա 33

Քա՞նի տեսակ գամետ է առաջացնում եռհետերոզիզոս օրգանիզմը.

- 1) 3 տեսակ
2) 4 տեսակ
3) 8 տեսակ
4) 9 տեսակ

Ա 34

Ո՞ր մոլեկուլներն են բացակայում քրոռայլաստների գրանների թաղանթներում.

- ԱԵՖ սինթեզող ֆերմենտների մոլեկուլները
2) քլորոֆիլի մոլեկուլները
3) գլյուկոզ սինթեզող ֆերմենտների մոլեկուլները
4) էլեկտրոն-փոխադրող մոլեկուլները

Ա 35

Ինչի՞ց է կախված օրգանիզմի սեռը.

- սեռական բջջների որակից
2) բեղմնավորման պահին սպերմատոզոֆիդների քանակից
3) ձվարշիջ տրամագծից
4) զիգոտի քրոմոսոմային հավաքակազմից

Ա 36

Ցուցուիմթեզի լուսային փուլում քրորոֆիլի մոլեկուլը ո՞ր մոլեկուլից է էլեկտրոն իր էլեկտրոնի կորուստը վերականգնելու համար.

- 1) ԱԵՖ-ի մոլեկուլից
2) քլորոֆիլի մեկ այլ մոլեկուլից
3) ջրի մոլեկուլից
4) ԱԵՖ-սինթետազի մոլեկուլից

Ա 37

Ո՞ր պրոցեսն է անսեռ բազմացման եղանակ.

- պարթենոգնոնով
2) բազմացումը սպորների միջոցով
3) կոնյուգացիան
4) բազմացումը բեղմնավորման միջոցով

Ա 38

Սեյնզի ո՞ր փուլում է տեղի ունենում քրոմոսոմների տրամախաչումը.

- առաջին բաժանման պրոֆազում
2) երկրորդ բաժանման մետաֆազում
3) երկրորդ բաժանման պրոֆազում
4) առաջին և երկրորդ բաժանումների պրոֆազում

Ա 39

Ի՞նչ գենոտիպ ունեն ծնողական ձևերը, եթե երկիրքիդ խաչաերումից ստացված սերնդում, երկու ալելով էլ ոչ լրիվ դրմինանտուրյան դեպքում, դիտվում է 1:1:1:1 ծեղավորում ըստ ֆենոտիպի.

- 1) AABB և aabb
2) AABB և AaBb
3) AaBb և aabb
4) ճիշտ են 2 և 3 այստասխանները

Ա 40

Ինչպե՞ս է ազդում միջավայրի պայմանների բազմազանությունը նշանակած պրոցեսների վրա.

- նեղանում է մողիֆիկացիոն փոփոխականությունը
2) լայնանում է մողիֆիկացիոն փոփոխականությունը
3) ավելի է մեծանում կայունացնող ընտրության դերը

- 4) ավելի է փոքրանում շարժական ընտրության դերը

Ա 41 Ո՞ր է էվոլյուցիայի տարրական միավորը.

- 1) ցեղը
- 2) տեսակը
- 3) առանձնյակը
- 4) պոպուլյացիան

Ա 42 Ո՞ր պրոցեսների արդյունքում է առաջանում հովանավորող գումարվորումը.

- 1) ժառանգական փոփոխականության, գոյության կովի և բնական ընտրության
- 2) օրգանիզմների վարժությունների
- 3) միջավայրի ուրուկի ազդեցության
- 4) մոդիֆիկացիոն փոփոխականության

Ա 43 Ո՞ր երևոյթը չի պատկանում գոյության կովի ձևերին.

- 1) գիշատչությունը
- 2) մակարուծությունը
- 3) կերպարանափոխությունը
- 4) մրցակցությունը

Ա 44 Ո՞ր պնդումն է ճիշտ ինֆրակարմիք ճառագայթների համար.

- 1) պահվում են մթնոլորտի օգրննային շերտի կողմից
- 2) մարդու աչքը չի ընկալում
- 3) նախատում են օրգանիզմում վիտամին D-ի սինթեզին
- 4) փոտոսիների համար էներգիայի աղբյուր են հանդիսանում

Ա 45 Ի՞նչն է բնորոշ կենսաբանական հետադիմությանը.

- 1) տեսակի արեալի ընդարձակումը
- 2) տեսակառաջացման արագացումը
- 3) պոպուլյացիաների և տեսակների քանակի նվազումը
- 4) հարմարվողականության բարձրացումը

Ա 46 Ո՞ր գործոնն է պատկանում բիոտիկ էկոլոգիական գործոններին.

- 1) ջերմաստիճանը
- 2) խոնավությունը
- 3) լուսավորվածությունը
- 4) մրցակցությունը

Ա 47 Սպիտակուցի մոլեկուլը կազմված է 300 ամինաթրուներից:

47.1 Քանի՞ առողջությունը է բաղկացած գ-նօթ-ի մոլեկուլի հատվածը, որը կողավորում է տվյալ սպիտակուցի մոլեկուլը.

- 1) 300
- 2) 600
- 3) 1800
- 4) 900

47.2 Ի՞նչ երկարություն ունի գ-նօթ-ի այդ հատվածը, եթե մեկ առողջությունը է 0,34 նմ է:

- 1) 306
- 2) 102
- 3) 204
- 4) 612

Ա 48 Գյուկոզի անթրվածին ճեղքման ժամանակ առաջացել է 16 մոլ H_2O :

48.1 Որոշել, թե քանի՞ մոլ գյուկոզ է ճեղքվել այդ ընթացքում:

- 1) 16
- 2) 4
- 3) 8
- 4) 12

48.2 Որոշել, թե քանի՞ մոլ ԱԵՖ է սինթեզվել այդ ընթացքում:

- 1) 12
- 2) 8
- 3) 24
- 4) 16

Բ մակարդակ

Բ 1

Օրգանիզմի պաշտպանական ո՞ր հատկությունը (նշված է ձախ սյունակում) իմունիտետի ո՞ր տեսակին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

- A. տվյալ տեսակի բոլոր առանձնյակներին հատուկ ունակություն
- B. հակամարմինների ստացում բուժիչ շիճուկի կազմում
- C. հակամարմինների առաջացում արյան մեջ պատվաստման արդյունքում
- D. հիվանդության նկատմամբ անընկալությունը ժառանգվում է սերնդե սերունդ

- 1) A-2, B-1, C-1, D-2
- 2) A-1, B-3, C-2, D-3
- 3) A-3, B-1, C-2, D-3
- 4) A-3, B-2, C-1, D-3
- 5) A-3, B-2, C-3, D-1
- 6) A-2, B-3, C-1, D-2

- 1. ակտիվ
- 2. պասիվ
- 3. քնածին

Բ 2

Բջջի ո՞ր օրգանիզմին (նշված է ձախ սյունակում) ո՞ր ֆունկցիան է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

Օրգանիզմներ

Ֆունկցիա

A. ոլորսումներ
պահպանում և հաղորդում
C. կորիզ
ԱԵՖ-ի տեսքով
E. լիզոսումներ

1. ժառանգական տեղեկատվության
B. միտոքոնդրումներ
2. բջջներին եներգիայով ապահովում՝
D. բջջային կենտրոն
3. սպիտակուցի կենսասինթեզ
4. բջիջ ներքափանցած նյութերի ճեղքում
5. մասնակցություն բաժանման իլիկի ձևավորմանը

- 1) A-3, B-1, C-2, D-4, E-5
- 2) A-3, B-2, C-1, D-5, E-4
- 3) A-2, B-1, C-4, D-3, E-5
- 4) A-1, B-2, C-5, D-4, E-3
- 5) A-3, B-2, C-1, D-4, E-5
- 6) A-4, B-2, C-1, D-5, E-3

Բ 3

Միջավայրի ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) միջավայրի ո՞ր տիպի գործոնին է (նշված է աջ սյունակում) պատկանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

Բնութագիր

Միջավայրի գործոն

- A. մքնարկության կազմի հաստատունություն
 B. օգնային էկրանի հաստության փոփոխություն
 C. ողի խոնավության փոփոխություն
 D. սպառողների (կոնսումենտներ) թվաքանակի փոփոխություն
 E. արտադրողների (պրոդուցենտներ) թվաքանակի փոփոխություն
 F. մակարույժների թվաքանակի մեծացում
1. թիոտիկ
 2. արիոտիկ

Բ 4

Նեյրոնների ո՞ր տեսակին (նշված է ձախ սյունակում) ո՞ր տեղակայումն է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

Նեյրոններ

Տեղակայում

- | | |
|---------------|---|
| A. զգայական | 1. ողնուղեղի գորշ նյութի առջևի եղջյուրներ |
| B. շարժողական | 2. ողնուղեղի գորշ նյութի հետին եղջյուրներ |
| C. միջաղիր | 3. ողնուղեղի գորշ նյութի կողմնային եղջյուրներ |
| D. վեգետատիվ | 4. ողնուղեղային հանգույցներ |
- նյարդային համակարգի

- 1) A-2, B-1, C-4, D-3
- 2) A-1, B-2, C-3, D-4
- 3) A-2, B-1, C-4, D-1
- 4) A-3, B-1, C-2, D-4
- 5) A-4, B-1, C-2, D-3
- 6) A-2, B-1, C-3, D-4

Բ 5

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում սաղմի զարգացման պրոցեսները: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. զիգոտի միտոտիկ բաժանում
 B. բլաստոմերների առաջացում
 C. տրոհում
 D. հյուսվածքների և օրգանների առաջացում
 E. միաշերտ սաղմի առաջացում
 F. երկշերտ սաղմի առաջացում

- 1) ABCFED
- 2) ACDBEF
- 3) ACBEFD
- 4) ADFCBCE
- 5) ACBFED
- 6) ABCEFD

Բ 6

Ի՞նչ հաջորդականությամբ են հաղորդվում ձայնային տատանումները լսողական ընկալիքներին: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. արտաքին ականց
 B. ձվածև պատուհանի քաղանք
 C. լսողական ոսկրիկներ
 D. թմրկաթաղանք
 E. խխունջի հեղուկ
 F. լսողական զգայարանի ընկալիքներ
- 1) ADBECF
 - 2) ABDECF
 - 3) ADCEFB
 - 4) ADECBF
 - 5) ADCBEF
 - 6) ADBCEF

Բ 7

Ինչպիսի՞ն է քջում սպիտակուցի կենսասինթեզի արոցեսների հաջորդականությունը: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. ի-ՈՒԹ-ի սինթեզ ԴՆԹ-ի վրա
 B. ամինաթրուների միացում փ-ՈՒԹ-ին
 C. ամինաթրվի փոխադրում ռիբոսում
 D. ի-ՈՒԹ-ի տեղաշարժ քջակորիզից դեպի ռիբոսում
 E. ռիբոսումի նստում ի-ՈՒԹ-ի վրա
 F. ամինաթրուներ կապած փ-ՈՒԹ-ի երկու մոլեկուլների միացում
 ի-ՈՒԹ-ի հետ
 G. ի-ՈՒԹ-ին միացած ամինաթրուների միջև փոխազդեցություն և
 պեպտիդային կապի առաջացում

- 1) ABCEFGD
- 2) ABDCEFG
- 3) ADBEFCD
- 4) ADEBCFG
- 5) ADBFECG
- 6) ABDECAG

Բ 8

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում արոցեսները մեյոզի առաջին բաժանման ժամանակ: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. հոմոլոգ քրոմոսոմների կոնյուգացիա
 B. քրոմոսմային զույգերի բաժանում միջյանցից և նրանց տարամիտում դեպի քջի քևոներ
 C. դուստր քջիների առաջացում
 D. հոմոլոգ քրոմոսոմների տեղակայում հասարակածային հարբության վրա

- 1) ABDC
- 2) ADCB
- 3) DABC
- 4) ADBC
- 5) DBAC
- 6) ABCD

Բ 9

Ի՞նչ հաջորդականությամբ են ընթանում քոչունների կրկնակի շնչառության փուլերը՝ սկսած ներշնչումից: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. օդը օդապարկերից անցնում է թոքեր, որտեղ թթվածնի մի մասը դիֆուզվում է թոքային մազանոթների արյան մեջ,
 իսկ մնացածը դուրս է բերվում
 B. ածխաթրու գազը դիֆուզվում է թոքային մազանոթների արյան միջից թոքեր և օդատար ուղիներով դուրս է բերվում
 C. օդը թոքեր է մտնում արտաքին միջավայրից
 D. օդը թոքերից անցնում է օդապարկեր, իսկ թթվածնի մի մասը դիֆուզվում է թոքային մազանոթների արյան մեջ

- 1) BACD
- 2) ADCB
- 3) CDBA
- 4) ADCB
- 5) BDCA
- 6) CADB

Բ 10

Ի՞նչ հաջորդականությամբ է ընթանում կենսոլորտում ածխածնի շրջապտույտը՝ սկսած անօրգանական ածխածնի յուրացումից: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. զյուկողի առաջացում բուսական բջիջներում
 B. ածխաթրու գազի կլանում բույսերի կողմից ֆոտոսինթեզի արդյունքում
 C. ածխաթրու գազի առաջացում շնչառության արդյունքում
 D. մի օրգանիզմի օրգանական նյութի կազմից անցում մեկ այլ օրգանիզմի նյութի կազմ

- 1) ABCD
- 2) ACBD
- 3) ABCD
- 4) BADC
- 5) BACD
- 6) ADBC

Բ 11

Ինչպիսի՞ն է էվոլյուցիայի շարժիչ ուժերի ազդեցության հաջորդականությունը բույսերի պոպուլյացիաներում սկսած մուտացիոն պրոցեսներից: Ընտրել ճիշտ պատասխանը:

- A. գոյության կողմէ
 B. օգտակար փոփոխություններով առանձնյակների թվի ավելացում
 C. զանազան ժառանգական փոփոխությունների առաջացում պոպուլյացիաներում
 D. միջավայրի տվյալ պայմաններում օգտակար ժառանգական փոփոխություններով առանձ նյակների պահպանում
 E. միջավայրի պայմանների նկատմամբ հարմարանքների ձևավորում

- 1) ACBDE
- 2) ABDCE
- 3) DABCE
- 4) DACBE
- 5) CABDE
- 6) CADBE

Բ 12

Ինչո՞վ են տարրերվում բույսերը կենդանիներից: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.

- A. բոլոր բույսերն ավտոտրոֆ են, իսկ կենդանիները՝ հետերոտրոֆ
 B. բույսերի ճնշող մեծամասնությունը ավտոտրոֆ է, կենդանիները՝ հետերոտրոֆ
 C. բույսերի աճը սահմանափակ է, իսկ կենդանիներն աճում են կյանքի ցանկացած փուլում, անհրաժեշտության դեպքում
 D. բույսերն աճում են ամբողջ կյանքի ընթացքում, իսկ կենդանիները միայն կյանքի սկզբնական փուլում
 E. բուսական բջիջները պարունակում են պլաստիդներ, միտոքոնդրիումներ, բջջապատ, վակուոլներ, իսկ կենդանական բջիջները՝ ոչ
 F. բուսական բջիջները պարունակում են պլաստիդներ, քլորոֆիլ, բջջապատ, վակուոլներ, իսկ կենդանական բջիջները՝ ոչ

- 1) ACEF
- 2) AC
- 3) ABE
- 4) BDEF
- 5) BDF
- 6) AE

Բ 13

Ո՞ր պնդումներն են համապատասխանում միջատների լրիվ կերպարանափոխությամբ զարգացման եղանակին: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.

- A. առկա է զարգացման երեք փուլ
 B. առկա է զարգացման չորս փուլ
 C. բրբուրը նման է հասուն միջատին
 D. բրբուրը նման չէ հասուն միջատին
 E. բրբուրային փուլին հաջորդում է հարսնյակային փուլը
 F. բրբուրը վերածվում է հասուն միջատի

- 1) ACE
- 2) ADF
- 3) BC
- 4) BDE
- 5) DF
- 6) CEF

Բ 14

Ո՞ր հատկանիշներն են բնութագրում երկենցաղներին որպես ցամաքային կենդանիներ: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.

- A. լողաբաղանքները թարի մատների միջև
- B. կոպերով պաշտպանված աչքերը
- C. արտաքին բեղմնավորումը
- D. լսողության օրգանում թմբկաբաղանքի առկայությունը
- E. երեք բաժիններից բաղկացած հատվածավորված վերջույթները
- F. փակ արյունատար համակարգը

- 1) ABDE
- 2) ABDF
- 3) BDE
- 4) AE
- 5) BCDF
- 6) ACF

Բ 15

Ինչպե՞ս են արձագանքում երեխաները դասի ավարտը ազդարարող զանգին, և ի՞նչ ռեֆլեքս է դրսարվում այդ ժամանակ: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.

- A. բոլոր տարիքի երեխաները միանման են արձագանքում
- B. միանման ձևով արձագանքում են դպրոցական տարիքի երեխաները
- C. ռեֆլեքսը ձեռք է բերվում կյանքի ընթացքում
- D. ռեֆլեքսը փոխանցվում է ժառանգաբար
- E. ռեֆլեքսը ոչ պայմանական է
- F. ռեֆլեքսը պայմանական է

- 1) ACE
- 2) BCDE
- 3) BC
- 4) ADE
- 5) BCF
- 6) DE

Բ 16

Ինչո՞ւ է դրսարվում քրոպալաստմերի և միտոքոնոպիտումների նմանությունը: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.

- A. շրջապատված են կրկնակի թաղանթով
- B. ներքին թաղանթների վրա տեղի է ունենում սպիտակուցի սինթեզ
- C. պարունակում են ոիքոստմներ
- D. ունեն սեփական ժառանգական նյութ
- E. բազմանում են բաժանվելով միտոզի եղանակով
- F. առկա են բոլոր տիպի բջիջներում

- 1) ABCD
- 2) ACEF
- 3) AEF
- 4) CDEF
- 5) DE
- 6) ACD

Բ 17

Ի՞նչ ֆունկցիաներ է կատարում ցիտոպլազման բջջում: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.

- A. հանդիսանում է բջիջի ներքին միջավայրը
- B. էուկարիոտ բջիջներում ծառայում է քրոմոսոմների տեղակայման վայր
- C. իրականացնում է կապը կորիզի և օրգանոիդների միջև
- D. ծառայում է որպես մատրիցա ածխաջրերի սինթեզի համար
- E. իրականացնում է ժառանգական տեղեկատվության փոխանցումը
- F. ծառայում է կորիզի և օրգանոիդների տեղակայման վայր

- 1) ABDE
- 2) BD
- 3) ADEF
- 4) ACF
- 5) AF
- 6) ABD

Բ 18

Ո՞ր շաբթում են նշված բոլոր սխալ պնդումները.

- A. կենսազանգվածը տեսակի, տեսակների խմբի կամ համակեցության կազմի մեջ մտնող առանձնյակների գումարային զանգվածն է՝ արտահայտված զանգվածի միավորներով
 B. սահմանափակող գործոնը անկենդան բնության ֆիզիկական և քիմիական գործոնների ամբողջությունն է, որոնք ազդում են օրգանիզմի վրա իր կենսամիջավայրում
 C. ավտոստրոֆները այն օրգանիզմներն են, որոնք օրգանական նյութերի կենսասինթեզի համար օգտագործում են լույսի կամ անօրգանական նյութերի քիմիական կապերի էներգիան
 D. դիմացկունության սահմանները միջավայրի գործոնի այն ինտենսիվության արժեքն է, որը ճնշում է կամ դադարեցնում օրգանիզմների կենսագործունեության դրսորումը
 E. արիոտիկ գործոնները միջավայրի գործոնի ազդեցության ինտենսիվության արժեքներն են, որոնց սահմաններում օրգանիզմների կենսագործունեության պրոցեսները օպտիմալ են
 F. կենսացենոզը որոշակի տարածք զբաղեցնող կենդանի օրգանիզմների (կենդանիների, բույսերի, սնկերի և միկրոօրգանիզմների) ամբողջությունն է

- 1) ADF
- 2) CF
- 3) DF
- 4) ACDF
- 5) BE
- 6) CD

Բ 19

Ո՞ր շաբթում են նշված բոլոր սխալ պնդումները.

- A. օղակավոր որդերը ամենաբարձր կազմավորված կենդանիներն են՝ որդերի այլ տիպերի համեմատ
 B. օղակավոր որդերն ունեն բաց արյունատար համակարգ
 C. օղակավոր որդերի մարմինը կազմված է առանձին հատվածներից
 D. օղակավոր որդերը չունեն մարմնի խոռոչ
 E. օղակավոր որդերի նյարդային համակարգը կազմված է շուրջկլանային օղակից և մեջքի նյարդային շղթայից
 F. օղակավոր որդերի մարմինը պատված է թեփուկներով

- 1) ACDF
- 2) BDF
- 3) CDEF
- 4) BC
- 5) DF
- 6) BDEF

Բ 20

Ո՞ր շաբթում են նշված բոլոր սխալ պնդումները.

- A. փոփոխականությունը նյութ է ապահովում բնական ընտրության համար՝ ստեղծելով ինչպես հատկանիշների նոր տարրերակներ, այնպես էլ նախկինում գոյություն ունեցած և նոր հատկանիշների բազմաթիվ համակցություններ
 B. ժառանգականությունը կենդանի օրգանիզմների նոր հատկանիշներ և հատկություններ ձեռք բերելու ունակությունն է
 C. գենը ԴՆԹ-ի մոլեկուլի կամ քրոմոսոմի տեղամաս է, որը պայմանավորում է որոշակի հատկանիշի կամ հատկանիշների զարգացում
 D. գենոտիպը կենդանի օրգանիզմների՝ սերնդից սերունդ իրենց հատկությունները և հատկանիշները, ինչպես նաև զարգացման առանձնահատկությունները փոխանցելու ունակությունն է
 E. ժառանգական փոփոխականությանը չի բերում գենոտիպում գեների նոր համակցության ձևավորումը
 F. սեռական քրոմոսոմներում, բացի սեռական պատկանելությունը որոշող գեներից, առկա են նաև գեներ, որոնք ոչ մի առնչություն չունեն այս կամ այն սեռի հատկանիշների հետ
 G. ալելային գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների միևնույն լոկուսներում և պատասխանատու են մի հատկանիշի զարգացման համար

- 1) ABCF
- 2) ADEF
- 3) BCDG
- 4) ABDG
- 5) BF
- 6) BDE

Բ 21 Ո՞ր շարքում են նշված բոլոր սխալ պնդումները.

- A. գամետները սեռական բջիջներ են, որոնք առաջանում են գամետոգենեզի արդյունքում
B. բեղմնավորումը սերմնահեղուկի արտամետումն է ձվակույտի վրա կամ դրա ներմուծումն է էգի սեռական ուղիներ
C. կոնյուգացիան գամետների միջև ժառանգական նյութի համարժեք փոխանակումն է
D. մեյոզը սեռական բջիջների՝ գամետների ձևավորման պրոցես է, որը ներառում է բազմացման, աճի, հասունացման և ձևավորման փուլեր
E. տրամախաչումը տեղի է ունենում մեյոզի առաջին բաժանման պրոֆազում, հոմոլոզ քրոմոսոմների միջև
F. միտոզը բջիջների բաժանման եղանակ է, որի ժամանակ տեղի է ունենում քրոմոսոմային հավաքակազմի ճշգրիտ և հավասարաչափ բաշխում դուստր բջիջների միջև

- 1) BDEF
- 2) ACD
- 3) BCD
- 4) DE
- 5) BD
- 6) BCDE

Բ 22 Ո՞ր շարքում են նշված բոլոր սխալ պնդումները.

- A. մուտացիայով պայմանավորված հիվանդությունը մի հասուն կենդանուց փոխանցվում է մյուս հասուն կենդանուն շփման ժամանակ
B. մուտացիայով պայմանավորված հիվանդությունը կարող է փոխանցվել օդակաթիլային եղանակով կամ շփման ճանապարհով
C. մուտացիայով պայմանավորված հիվանդությունը երբեք չի փոխանցվում սերունդներին
D. մուտացիան կենդանիների մոտ փոխանցվում է սերունդներին, եթե առաջացել է սեռական բջիջներում
E. մուտացիաները հանդիսանում են ժառանգական փոփոխականության մշտական աղբյուր

- 1) ACDE
- 2) AB
- 3) BDE
- 4) ABC
- 5) ABDE
- 6) AC

Բ 23 Ալիքիզմը (գունանյոթի բացակայություն) ժառանգվում է որպես առոտոսմային ռեցեսիվ հատկանիշ: Հիվանդությունը հանդիպում է 1:10 000 հաճախականությամբ:

23.1 Որոշել պոպուլյացիայում դոմինանտ գենի հանդիսանան հավանականությունը:

- 1) 0.01 2) 0.1 3) 0.9 4) 0.99 5) 1% 6) 9.9%

23.2 Հաշվել պոպուլյացիայում հետերոզիզոտ առանձնյակների տոկոսը:

- 1) 99% 2) 19.8% 3) 1.98% 4) 1.89% 5) 9.9% 6) 0.196%

Բ 24

Գյուկողի ճնշքման պրոցեսում առաջացել է 140 մոլ ջուր և օրգանիզմում մնացել է 8 մոլ կաթնաբբու:

24.1 Որոշել, թե քանի՞ մոլ գյուկող է ծեղզվել այդ ընթացքում:

- 1) 8 2) 7 3) 4 4) 14 5) 5 6) 12

24.2 Որոշել, թե քանի՞ մոլ ԱԵՖ է առաջացել ամբթվածին փուլում:

- 1) 8 2) 14 3) 16 4) 32 5) 7 6) 4

24.3 Որոշել, թե քանի՞ մոլ ԱԵՖ է առաջացել բբվածնային փուլում:

- 1) 140 2) 252 3) 108 4) 122 5) 132 6) 120

Բ 25

Ի-ՌՆԹ-ի մոլեկուլ կազմված է 968 նուկլեոտիդներից:

25.1 Որոշել, թե քանի՞ ամինաբբուներից բաղկացած շղթա է այն կողավորում:

- 1) 322 2) 644 3) 1936 4) 968 5) 153 6) 966

25.2 Որոշել, թե քանի՞ ամուլետուիդներից է կազմված ԴՆԹ-ի մոլեկուլի այն հատվածը, որից ստացվել է այդ ի-ՌՆԹ-ը:

- 1) 968 2) 2872 3) 1936 4) 484 5) 242 6) 896

25.3 Որոշել ԴՆԹ-ի այդ հատվածի երկարությունը, եթե մեկ ամուլետուիդի երկարությունը $0,34 \text{ նմ}$ է:

- 1) 658 2) 329 3) 110 4) 968 5) 239 6) 980

ԱՇԽԱՐՀԱՆՔՐՈՒԹՅՈՒՆ

Առաջադրանքների բաշխումն ըստ դասընթացի բաժինների և թեմաների

Թեստը պարունակում է աշխարհագրության դպրոցական ծրագրի բոլոր բաժինները և թեմաները.

1. Ընդհանուր տեղեկություններ Երկիր մոլորակի մասին
2. Աշխարհագրական բաղանք
3. Մայրցամաքներ և օվկիանոսներ
4. Հասարակական աշխարհագրություն
5. Տարածաշրջաններ և երկրներ
6. Հայաստանի աշխարհագրություն
7. Բնօգտագործում և բնապահպանություն


Թեստում տրված են աշխարհագրական բաղանքի բոլոր ոլորտների (քարողութ, ջրողութ, մքնողութ, կենսողութ) և մայրցամաքների (Աֆրիկա, Ավստրալիա, Անտարկտիդա, Հարավային Ամերիկա, Հյուսիսային Ամերիկա, Եվրասիա), ինչպես նաև հասարակական աշխարհագրության հիմնական բաժինների (աշխարհի բաղաքական քարտեզ, աշխարհի բնակչություն, համաշխարհային տնտեսություն, տարածաշրջաններ և երկրներ), Հայաստանի (Հայկական լեռնաշխարհ, Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն), բնօգտագործման և բնապահպանության վերաբերյալ առաջադրանքներ:

Ըստ բաժինների և թեմաների առաջադրանքների քանակը որոշելիս, հաշվի է առնված դպրոցական ծրագրերով դրանց հատկացված ժամաքանակների համամասնությունը:

ԹԵՌԱՍ Ա ՍԱԿԱՐԴԱԿ

Ա 1 Ա կետի ազիմուտն է.

- 1) 45^0
- 2) 135^0
- 3) 315^0
- 4) 225^0



Ա 2 Կետի կոորդինատներն են հս. լ. 30^0 , արլ. ե. 40^0 :

Հասարակածից նրա հեռավորությունը կինի.

- 1) 3330 կմ
- 2) 5000 կմ
- 3) 4400 կմ
- 4) 2200 կմ

Ա 3 Ո՞ր մասշտաբն է ամենախոշորը.

- 1) 1 : 200000
- 2) 1 : 80000
- 3) 1 : 400000
- 4) 1 : 1000000

Ա 4 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Երկիրն Արեգակին ամենամոտ մոլորակն է:
- 2) Երկիր երևակայական առանցքը թեքված է իր ուղեծրի հարթության նկատմամբ $66^{\circ}30'$ անկյան տակ:
- 3) Հասարակածի երկարությունը 60.000 կմ է:
- 4) Հունիսի 22-ի կեսօրին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:

